

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՄԻՐԱԿԱՆՑԱՆ ՆԱՐԻՆԵ ՀԱՄԼԵՏԻ

**ԱՐԴԻ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՋԱՎԱԽՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ**

**ԺԳ.00.01- «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2016

**Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանում**

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Ե. Ս. Գրիգորյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր **Ա. Վ. Աբրահամյան**

Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Ա.Գ.Հարությունյան**

Առաջատար կազմակերպություն՝

Գյումրու Մ. Նալբանդյանի անվան
պետական մանկավարժական
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. ապրիլի 14-ին՝
ժամը 12⁰⁰-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժությունե 020 մասնագիտական
խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. մարտի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ



Ա.Հ. Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Ջավախքի մշակույթը հայկական ամբողջական մշակույթի մի մասն է: Ջավախքի հայությունն այսօր տարբեր ոլորտներում, այդ թվում՝ նաև կրթական ոլորտում, ունի մի շարք հիմնախնդիրներ: Ջավախքի հայ բնակչությունը դարեր շարունակ կերտել է ինքնատիպ և հարուստ մշակույթ, որի հիմքը դպրոցն է: Ջավախքի հայկական դպրոցները, գտնվելով Վրաստանի տարածքում, սերտ կապ են ունեցել հայկական կրթական իրականության հետ, պահպանել են իրենց ազգային ինքնությունը և առ այսօր պայքարում են դրա համար: Դրանք, ինչպես արևելահայ մյուս դպրոցները, կրել են ռուսական և եվրոպական մանկավարժության ազդեցությունը, սակայն առաջնորդվել են հայկական կրթական համակարգի կառավարման ավանդույթներով, ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացման մեթոդներով, ձևերով, մշակույթով՝ չանտեսելով համաշխարհայինը:

Բազմիցս խոսվել է Ջավախքի քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական հիմնախնդիրների մասին, տրվել դրանց լուծմանն ուղղված որոշ առաջարկներ, սակայն, ցավոք, դրանք համակարգված բնույթ չունեն, իսկ հանրակրթությանը վերաբերող հիմնախնդիրները մանկավարժական տեսանկյունից համակողմանի քննության դեռևս չեն ենթարկվել: Դրա հիմնական պատճառներից մեկն էլ երկրամասի զարգացմանը նպաստող, մասնավորապես՝ տարածաշրջանի հայկական դպրոցների համար նախատեսված կրթադաստիարակչական հայեցակարգի բացակայությունն է:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ այսօր տարածաշրջանի դպրոցներում առկա են որոշակի հիմնախնդիրներ կառավարման և ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման, այդ թվում՝ մանկավարժական նորարարական մեթոդների կիրառման, երկլեզու կրթության կազմակերպման, խոսքի մշակույթի զարգացման, գնահատման չափանիշների պահպանման, գիտության զարգացման և հոգեբանամանկավարժական պահանջներին բավարարող դասագրքերի առկայության, ՏՀՏ-ի կիրառման, «Հայոց պատմություն» դասընթացի կազմակերպման, ազգային դաստիարակության իրականացման և այլ բնագավառներում:

Երկրամասի կրթադաստիարակչական հիմնախնդիրները ազգային տեսանկյունից հայ և վրաց հանրությանը ներկայացնելը կարող է մեծապես փոխել իրավիճակը, և տարածաշրջանի հայկական դպրոցները ծառայեցնել ազգային ոգու վերածնմանը, հայոց լեզվի, պատմության, մշակույթի և ավանդույթների պահպանմանը, ազգային դաստիարակության ամրապնդմանը: Դրանց հրատապությամբ էլ պայմանավորված է աշխատանքի արդիականությունը: **Հետազոտության մշակվածության աստիճանը:** Ջավախքի պատմական անցյալի, տարբեր ժամանակներում գործող դպրոցների, աշակերտների, ուսուցիչների քանակի, նրանց կրթական աստիճանի վերաբերյալ պատմամանկավարժական նշանակալի տեղեկություններ են պարունակում մի շարք ուսումնասիրու-

թյուններ (Տ. Ղ. Սահակյան, Ե. Ա. Լալայան, Ա. Ա. Մելքոնյան, Պ. Խ. Գևորգյան, Վ.Դ. Սարգսյան):

Որոշակի նյութեր գետեղված են տարածաշրջանում գործող միջազգային վրացական ոչ կառավարական հասարակական կազմակերպությունների առանձին հետազոտություններում, որոնք վերաբերում են տարածաշրջանի ժողովրդագրական պատկերին, տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքին, դպրոցների վիճակագրական տվյալներին և այլն: Տարածաշրջանի կրթադաստիարակչական հիմնախնդիրների ամբողջական պատկերը ներկայացնելու համար կարևոր է նշել նաև Վրաստանում, Հայաստանում, ինչպես նաև սփյուռքում հրատարակվող հայալեզու մամուլը, որը պարունակում է երկրամասի տարբեր բնագավառներին վերաբերող մի շարք տեղեկություններ:

Մերօրյա գիտնականներից երկրամասի պատմության, կրթական գործի վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ ունեն հատկապես Ա. Ա. Մելքոնյանը և Պ. Հ. Գևորգյանը: Նրանց գործերը բավականին լուրջ պատմական տվյալներ են տալիս այս երկրամասի տնտեսական, քաղաքական, կրթամշակութային, էթնիկական վիճակի մասին:

Այս ամենով հանդերձ, դեռևս ամբողջովին ուսումնասիրված և լուծված չեն երկրամասի որոշ կրթական հիմնախնդիրներ, որոնք վերաբերվում են հատկապես մայրենի լեզվի, պատմության ուսուցման իրականացմանը, ազգային դասիարակության, երկլեզու ուսուցման խնդիրներին: Առանձին զանգվածային լրատվական միջոցների և հետազոտողների՝ այս թեմայի շուրջ կատարված վերլուծությունները դեռևս կարիք ունեն ամբողջական ներկայացման և մանկավարժագիտական խոր ուսումնասիրության:

Սույն հետազոտությունը քննվող ժամանակահատվածում երրամասի կրթադաստիարակչական հիմնախնդիրների ուսումնասիրության և դրանցից բխող հետևանքների կանխատեսման և վերլուծության առաջին փորձերից է, որը կարող է հիմք հանդիսանալ հետագա ուսումնասիրությունների համար:

Աշխատության մեջ մեծ չափով օգտագործվել են Վրաստանի և Հայաստանի Հանրապետությունների օրենքներ, որոնք վերցված են վրացական և հայկական պաշտոնական կայքէջերից, օրենսգրքերից և վերաբերում են կրթության բնագավառում տարբեր որոշումներին, դպրոցների վիճակագրական տվյալներին, կրթական բարեփոխումներին և ծրագրերին:

Հետազոտության նպատակն է բացահայտել Ջավախքի հայկական դպրոցներում արդի կրթադաստիարակչական հիմնախնդիրները և դրանց ազդեցությունը ջավախահայ երեխաների կրթության որակի վրա, առաջադրել դրանց լուծման նոր մոտեցումներ և ուղիներ:

Հետազոտության օբյեկտը Ջավախքի հայկական դպրոցներում արդի կրթադաստիարակչական հիմնախնդիրներն են:

Հետազոտության առարկան Ջավախքի հայկական դպրոցների կրթադաստիարակչական հիմնախնդիրների լուծման ուղիներն են:

Հետազոտության գիտական վարկածը մեր այն ենթադրությունն է, ըստ որի՝ Ջավախքի հայկական դպրոցներում առկա կրթադաստիարակչական խնդիրները կարող են լուծվել, եթե՝

1. բացահայտվեն արդի կրթադաստիարակչական հիմնախնդիրները և դրանց առաջացման օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները գիտամանկավարժական տեսանկյունից,
2. հետազոտվի ջավախահայ դպրոցների կառավարման և ուսումնադաստիարակչական գործընթացի էությունը և վեր հանվեն առկա խնդիրները՝ ազգային կրթության համատեքստում,
3. հիմնավորվի տարածաշրջանի կրթական հիմնախնդիրների ուսումնասիրման կենտրոնների ստեղծման անհրաժեշտությունը,
4. առաջադրվեն առկա կրթադաստիարակչական հիմնախնդիրների լուծմանը միտված արդյունավետ ուղիներ, որոնք կներառեն կրթության բովանդակության արդիականացման, դպրոցի կառավարման, ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման ուղիները և կնպաստեն սովորողների ազգային և քաղաքացիական դաստիարակությանը, արժեքային կողմնորոշումների ձևավորմանն ու զարգացմանը, միջմշակութային երկխոսությանը:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության նպատակով, օբյեկտով և վարկածով պայմանավորված՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. հետազոտության հիմնախնդիրների վերաբերյալ հոգեբանամանկավարժական, պատմական և մեթոդական գրականության, մամուլի, օրենսդրության վերլուծությունների հիման վրա բացահայտել Ջավախքի հայկական դպրոցներում կրթադաստիարակչական հիմնախնդիրները և դրանց առաջացման պատմամանկավարժական հիմքերը,
2. հետազոտել ջավախահայ դպրոցների կառավարման և ուսումնադաստիարակչական գործընթացի էությունը և վեր հանել առկա խնդիրները՝ շեշտադրելով ազգային լեզվի, պատմության, մշակույթի պահպանման ու ազգային դաստիարակության իրականացման անհրաժեշտությունը,
3. հիմնավորել երկլեզու ուսուցման մոդելների ու մեթոդների մշակման, դասագրքերի կատարելագործման և ուսուցիչների՝ առարկայական երկլեզու գիտելիքների խորացման համար տարածաշրջանի կրթական հիմնախնդիրների ուսումնասիրման կենտրոնների ստեղծման անհրաժեշտությունը,
4. առաջադրել առկա կրթադաստիարակչական հիմնախնդիրների լուծմանը միտված արդյունավետ ուղիներ, որոնք կնպաստեն նաև սովորողների ազգային և քաղաքացիական դաստիարակությանը, արժեքային կողմնորոշումների ձևավորմանն ու զարգացմանը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են ծառայել տեսության և պրակտիկայի փոխկապվածության, արժեքաբանական, մարդասիրական, համակարգային մոտեցումներն ու սկզբունքները, անձի զարգացման, արժեհամակարգի և մարդասիրական դիրքորոշումների ձևավորման վերաբերյալ տեսությունները, ինչպես նաև մանկավարժական (Ղ. Ադայան, Մ. Նալբանդյան, Պ. Խ. Գևորգյան, Լ. Թ.

Ասատրյան, Կ. Բեյկեր, Ն. Իմեդաձե, Շ. Տաբատաձե), պատմական (Ա. Ա. Մելքոնյան, Ե. Ա. Լալայան, Վ. Դ. Սարգսյան) և հոգեբանական (Ա. Ա. Նալչաջյան, Գ. Մ. Էդիլյան) մի շարք հետազոտություններ:

Հետազոտության մեթոդները: Առաջադրված հիմնախնդիրների լուծման համար կիրառվել են փոխադարձաբար իրար լրացնող հետազոտական հետևյալ **մեթոդները.**

- տեսական՝ մանկավարժական, հոգեբանական, պատմական գրականության համեմատական վերլուծություն, համադրում, ընդհանրացում,
- էմպիրիկ՝ դիտում, վերլուծություն, զրույց, անկետավորում,
- վիճակագրական՝ հարցման տվյալների մաթեմատիկական վերլուծություն:

Հետազոտության փորձնական բազա են հանդիսացել Վրաստանի Նինոժմինդայի շրջանի Գանձայի թիվ 1 և Գանձայի թիվ 2, ք. Նինոժմինդայի թիվ 1, Ախալքալաքի շրջանի Հոկամի թիվ 2, ք. Ախալքալաքի թիվ 5 հանրային դպրոցները:

Հետազոտության կազմակերպման և անցկացման փուլերը.

Առաջին փուլում (2006-2008 թթ.) իրականացվել են հետազոտության հիմնախնդրին վերաբերվող հոգեբանամանկավարժական, մեթոդական և պատմական գրականության ուսումնասիրություն, համապատասխան նյութերի հավաքում, որոշվել է հետազոտության մշակվածության աստիճանը, կատարվել են ատենախոսության բովանդակության հստակեցման և պլանավորման աշխատանքներ, սահմանվել է հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, խնդիրները և մեթոդները:

Երկրորդ փուլում (2008-2012 թթ.) դպրոցների տնօրենների, ուսուցիչների և աշակերտների շրջանում անցկացվել են անկետային հարցումներ «Կազմակերպչական աշխատանքների իրականացումը ջավախահայ դպրոցում և դպրոցի նյութատեխնիկական ապահովությունը», «Ուսուցչի մանկավարժական գործունեությունը ջավախահայ դպրոցում», «Ազգային դաստիարակության իրականացումը ջավախահայ դպրոցում և դպրոց-համայնք-ընտանիք հարաբերությունները ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում», «Դպրոցի արժևորումը աշակերտի կողմից» խնդիրների վերաբերյալ, վերլուծվել են ստացված տվյալները:

Երրորդ փուլում (2012-2014 թթ.) մշակվել և առաջադրվել են ջավախահայ դպրոցի հիմնախնդիրների լուծման մոտեցումները և ուղիները, կատարվել են ատենախոսության ջարադրման, վերլուծության, հետազոտության արդյունքների ամփոփման աշխատանքներ:

Հետազոտության գիտական նորույթն է.

- Վրաստանի հայկական դպրոցների կառավարման նորմատիվաիրավական փաստաթղթերի, պատմական, մանկավարժական գրականության ուսումնասիրության և վերլուծության հիման վրա բացահայտվել են Ջավախքի հայկական դպրոցներում արդի կրթադաստիարակչական հիմնախնդիրները և դրանց առաջացման պատմամանկավարժական հիմքերը:

- Հաշվի առնելով տարածաշրջանում ազգային արժեքների պահպանման, միջմշակութային հաղորդակցման և երկլեզվության հարցերը՝ առաջադրվել են ջավախահայ դպրոցներում կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացման համար մոտեցումներ և ուղիներ՝ դպրոցի կառավարման և ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ:
- Սովորողների ազգային և քաղաքացիական դաստիարակության, արժեքային կողմնորոշումների ձևավորման ու զարգացման համար ներկայացվել են առաջարկներ, որոնք ներառում են՝ «Հայոց պատմություն» առարկայի ընդգրկում դպրոցական ծրագրերում, ազգային պատմությանը, մշակույթին և ավանդույթներին առնչվող հարցերի դիտարկում հումանիտար առարկայախմբում՝ ինտեգրացված ձևով, գրականության, պատմության և արվեստի տարբեր խմբակների ստեղծում, երկու երկրների պատմությունն ու մշակույթն արտացոլող միջոցառումների կազմակերպում և փորձի փոխանակման նպատակով Վրաստանի և Հայաստանի տարբեր դպրոցների համագործակցության ապահովում, հայ-վրացական միջմշակութային կապերի սերտացում:

Հետազոտության տեսական նշանակությունը պայմանավորված է

Ջավախքի հայկական դպրոցների ընդհանուր կրթական վիճակի գիտական վերլուծության անհրաժեշտությամբ: Ատենախոսությունը, լուսաբանելով կարևոր մի տարածաշրջանի հայկական դպրոցների արդի կրթադաստիարակչական հիմնախնդիրները, կարող է ուղեցույց լինել կրթության և քաղաքականության ոլորտի հետազոտողների համար: Հայկական շրջանակներում վերջինիս նկատմամբ կրթական հայեցակարգի և տարաբնույթ տեղեկությունների բացակայության պայմաններում առավել կարևորություն է ստանում այդ հիմնախնդիրը: Հետազոտությունը նպաստում է նաև հայ մանկավարժական մտքի պատմության զարգացմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը:

- Ջավախքի հայկական դպրոցների հիմնախնդիրների առաջացման պատճառների բացահայտումը, դրանց հստակեցումը և առաջադրված մոտեցումները կարող են ճիշտ կողմնորոշել տարածաշրջանի դպրոցների ուսուցիչներին, տնօրեններին: Այն տալիս է ամփոփ տեղեկատվություն տարածաշրջանի կրթական հիմնախնդիրների մասին,
- այն հիմք կհանդիսանա տարածաշրջանի կրթական ոլորտում հայեցակարգերի մշակման, դասագրքերի բարելավման, գիտաժողովների անցկացման, ուսուցիչների վերապատրաստման դասընթացների ու սեմինարների կազմակերպման համար,
- հետազոտության արդյունքները կարող են հիմք ծառայել մանկավարժական հատուկ դասընթացների ստեղծման, ինչպես նաև կուրսային ու ավարտական աշխատանքների թեմաների մշակման համար:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են.

1. Ջավախքի հայկական դպրոցներում արդի կրթադաստիարակչական հիմնախնդիրների բացահայտումը օրախնդիր է, այն պահանջում է կրթադաստիարակչական գործընթացի խոր ուսումնասիրություն, վերլուծություն և լուծման ուղիների առաջադրում՝ հաշվի առնելով ազգային արժեքների պահպանման, միջմշակութային հաղորդակցման և երկլեզվության հարցերը:
2. Ջավախքի հայկական դպրոցներում կրթադաստիարակչական աշխատանքների բարելավման համար կարևոր է հետևյալ խնդիրների լուծումը.
 - ա) կրթության բովանդակության արդիականացում և իրականացում,
 - բ) դպրոցի կառավարման սուբյեկտների գործունեության ռազմավարության մշակում,
 - գ) ուսուցիչների գործունեության վերահսկում, արդյունքների վերլուծություն, օբյեկտիվ գնահատում և մասնագիտական աճի ապահովում,
 - դ) մանկավարժական կոլեկտիվներում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ստեղծում ու կառավարման տարբեր սուբյեկտների միջև սերտ համագործակցության ապահովում:
3. Ջավախահայ դպրոցներում նորամուծությունների ակտիվ և պլանավորված ներդրումը, ուսումնադաստիարակչական նորարարական մեթոդների, ՏՀՏ-ի արդյունավետ կիրառումը, ուսուցիչների մասնագիտական և մանկավարժական գիտելիքների (նաև՝ երկլեզու գիտելիքների) խորացումը, նրանց ինքնազարգացումը, վերապատրաստման դասընթացների, սեմինարների, գիտաժողովների պարբերաբար կազմակերպումը, վրացերենից հայերեն թարգմանված դասագրքերի բարելավումը, խոսքի մշակույթի զարգացումը նպաստում են կրթադաստիարակչական հիմնախնդիրների լուծման արդյունավետությանը:
4. Ջավախահայ դպրոցներում կրթադաստիարակչական հիմնախնդիրների լուծմանը միտված ուղիներն ապահովում են սովորողների ազգային և քաղաքացիական դաստիարակության արդյունավետությունը, ինչը հաստատվել է հետազոտությանը: Այդ մշակված ուղիների համալիրը ներառում է.
 - ա) «Հայոց պատմություն» առարկայի ընդգրկում դպրոցական ծրագրերում լրացուցիչ պարապմունքների միջոցով,
 - բ) հայոց պատմությանը և մշակույթին առնչվող հարցերի դիտարկում հումանիտար առարկայախմբում՝ ինտեգրացված ձևով,
 - գ) գրականության, պատմության և արվեստի խմբակների ստեղծում, ինչը հնարավորություն կտա սովորողներին գիտակցել ազգային և համամարդկային արժեքները, ձեռք բերել ազգային մշակութային և պատմական խոր գիտելիքներ և ձևավորել հայերեն ճիշտ խոսելու կարողություն,
 - դ) հայ-վրացական միջմշակութային կապերի սերտացում, սովորողներին՝ երկրի մշակութային և հասարակական կյանքում ինտեգրման աջակցում:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը երաշխավորվում է կրթադաստիարակչական ոլորտում փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական գիտությունների արդի նվաճումների հիման վրա կատարված վերլուծությամբ, փորձարկվող դպրոցների լայն ընդգրկվածությամբ, հետազոտության տևական և համակարգային բնույթով, հարցումների արդյունքների վերլուծությամբ և մշակմամբ:

Հետազոտության արդյունքները քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի նիստերում, հրապարակված գիտամանկավարժական հոդվածներում, Կրթության ազգային ինստիտուտում (2014 թ.), ՀՊՄՀ-ում կազմակերպված «Հայկական լեռնաշխարհ» թեմայով գիտաժողովում (2015 թ.), ՀՀ ԿԳՆ և ԿԱԻ-ի կողմից կազմակերպված «Մփյուռքում հայեցի կրթության կազմակերպման արդի հիմնախնդիրները» թեմայով համահայկական գիտագործնական մանկավարժական համաժողովում (2015 թ.), գիտավործի բազա հանդիսացող դպրոցներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, հայալեզու և օտարալեզու գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը ներառում է 166 համակարգչային էջ, 15 աղյուսակ, 2 գրաֆիկ, 4 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, ներկայացվել են հետազոտության փուլերը, շարադրվել են գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության **առաջին գլուխը՝ «Արդի կրթադաստիարակչական հիմնախնդիրների առաջացման պատմական և մանկավարժական հիմքերը Ջավախքում»**, բաղկացած է չորս ենթագլխից և նվիրված է Ջավախքի հայ դպրոցի պատմությանը, տարբեր ժամանակներում կրթության զարգացմանը և ազգային դաստիարակության իրականացմանը:

Առաջին ենթագլխում՝ «Դպրոցը և կրթությունը Ջավախքում 19-րդ դարում», ներկայացված է Ջավախքի հայ դպրոցի անցած պատմական ուղին, կրթամշակութային կյանքի զարգացումը և այն հիմքերը, որոնց վրա ստեղծվել ու զարգացել է հայ դպրոցը:

Երկրորդ ենթագլխում՝ «Կրթության զարգացումը Ջավախքում խորհրդային իշխանության և անկախացման տարիներին», անդրադարձ է կատարվել տարբեր ժամանակաշրջանում Ջավախքի դպրոցների առջև ծառայած, լեզվական, ուսումնադաստիարակչական այն խնդիրներին, որոնք ինչ-որ չափով ընկած են կրթության արդի հիմնախնդիրների հիմքում: Համեմատական վերլուծության

հիման վրա հետևություն է արվել, որ խորհրդային և անկախացման տարիներին որոշակի զարգացում է ապրել և այսօր Ջավախքում ազգային դպրոցը ամուր հիմքեր ունի:

Հիմնավորվում է, որ մինչխորհրդային շրջանում Ջավախքը, մյուս հայկական գավառների նման, ազգային, մշակութային, հոգևոր կյանքի ընդհանուր օրինաչափություններով համահայկական կյանքի հողվույթի մեջ էր, իսկ խորհրդային տարիներին Վրաստանի իշխանությունների առաջնահերթ խնդիրներից մեկը ազգային համայնքների ներքին կյանքի կազմակերպումն էր՝ Վրաստանի ազգային-պետական շահի գերակայության տեսանկյունից, որի հետևանքով աստիճանաբար ինքնուրույնությունից զրկվեցին կրթամշակութային բոլոր հաստատությունները, սկսեցին կազմալուծել ազգային-մշակութային կյանքի կարևորագույն օղակները: Մի կողմից թվում էր, թե ազգային դպրոցը ազատ էր, սակայն մյուս կողմից՝ աննկատ ձևով տրվում էին սահմանափակումներ: Այս ամենով հանդերձ խորհրդային իշխանության տարիները աչքի էին ընկնում կրթական բարձր մակարդակով, ուսուցիչների և աշակերտների թվի մեծացմամբ, դպրոցական ցանցի ընդլայնմամբ: Իսկ անկախացումը Ջավախքի համար բերեց նոր կրթական խնդիրներ, որոնք խոչընդոտում էին ազգային կրթության իրականացումը: Որպես այդպիսիք կարելի է համարել Ախալցխայի գյուղատնտեսական տեխնիկումի հայերեն լեզվով ուսուցմամբ հաշվապահական ֆակուլտետի փակումը, «Հայոց պատմություն» առարկայի դուրս մղումը դպրոցական ծրագրերից և այլն: Այս տարիներին իշխանության ամեն մի քայլն ուղղված էր հայկական կրթության սահմանափակմանը, իսկ վրացերեն լեզվի ուսուցումը արդյունավետ չէր իրականացվում:

Բոլոր ժամանակաշրջաններում էլ իշխանությունները կենտրոնանում էին հիմնականում ազգային դպրոցների վրա՝ փորձելով դրանք հեռացնել ազգայինից, ինտեգրել մի միասնական դաշտում:

Երրորդ ենթագլխում՝ «Ազգային կրթությունը՝ որպես ազգային դաստիարակության իրականացման գործոն», քննության է առնված 19-20-րդ դարերում Ջավախքում ազգային դաստիարակության դրվածքը՝ հարցի շրջանակներում անդրադառնալով նաև շատ հայ մանկավարժական գործիչների գաղափարներին: Բոլոր ժամանակներում էլ ազգային դաստիարակության իրականացման կարևոր գործոններից են եղել հայ ազգային դպրոցը, հայ առաքելական եկեղեցին, մայրենի լեզվով ուսուցումը: Ջավախքի հայկական դպրոցներում դաստիարակության համակարգը միշտ ազգային բնույթ է ունեցել: Չնայած տարբեր ազդեցություններին, դպրոցները չեն կորցրել իրենց ազգային դիմագիծը:

Ազգային դպրոցի, ազգային դաստիարակության շնորհիվ է, որ բազում խնդիրների կողքին հայաշատ Ջավախքը կարողացել է պահպանել իր գոյությունն ու ինքնուրույնությունը: Սակայն այսօր կարևոր խնդիր է դարձել ազգային դպրոցների գոյության, ազգային դաստիարակության իրականացման, և դրա կարևորագույն պայմաններից մեկի՝ մայրենի լեզվով ուսուցման հիմնահարցը Ջավախքում:

Չորրորդ ենթագլխում՝ «Հայ մամուլի և հայկական հասարակական կազմակերպությունների կրթալուսավորչական դերն ու նշանակությունը Ջավախքում», լուսաբանված է Ջավախքում գործող մամուլի, հեռուստատեսության ազդեցությունը սերունդների կրթության որակի վրա, հայկական հասարակական կազմակերպությունների դերը ազգային դաստիարակության իրականացման գործում:

Ներկայացնելով Ջավախքի հայ տպագրական մամուլի հարուստ պատմությունը՝ հատկապես կարևորվել է հայերեն «Մանկավարժանոց» հանդեսի (1885 թ.), «Ջավախք» պարբերականի (1916 թ.) տպագրությունը, որոնցում լուսաբանվել են դպրոցական կյանքը, առաջ քաշվել ուսուցիչների պատրաստմանը, ինքնագարգացմանը և կրթությանը վերաբերող տարբեր հարցեր, մասնավորապես՝ ուսուցողական նյութեր, վիճակագրական տվյալներ, խորհուրդներ՝ ուղղված հայ ուսուցիչներին: Անդրադարձ է կատարվել նաև Ջավախքում գործող հայալեզու մամուլի բովանդակությանը՝ կարևորելով դրանցում այնպիսի նյութերի ընդգրկումը, որոնք, տեղեկատվություն հաղորդելուց բացի, կունենան նաև դաստիարակչական նշանակություն: Կարևոր է համարվել նաև տարածաշրջանում հայկական հասարակական կազմակերպությունների գործունեությունը, դրանք ջավախահայ երեխաների համար ուսումնական արտադպրոցական և արտաուսումնական բազմաթիվ աշխատանքների (միջոցառումներ, օլիմպիադաներ և այլն) կազմակերպման միջոցով նպաստում են սերունդների ազգային դաստիարակության իրականացմանը:

Երկրորդ գլխում՝ «Արդի կրթադաստիարակչական հիմնախնդիրները Ջավախքի հայկական դպրոցներում», ընդգրկված է 5 ենթագլուխ, որոնցում, հենվելով սեփական փորձի, տնօրենների, ուսուցիչների, աշակերտների հետ անցկացրած անկետային հարցումների վրա, վեր է հանվել Ջավախքի հայկական դպրոցներում առկա հիմնախնդիրները, վերլուծվել դրանց առաջացման պատճառները և առաջադրվել ուղիներ այդ խնդիրների լուծման համար:

Առաջին ենթագլխում՝ «Կրթության կազմակերպման սոցիալ-քաղաքական պայմանները Ջավախքի հայկական դպրոցներում», ներկայացվել է այն կրթական-քաղաքական, օրենսդրական դաշտը, որում այսօր գործում են հայկական դպրոցները:

Քննության են առնվել շատ փաստեր՝ գալով այն համոզման, որ Ջավախքի կրթական, սոցիալ-քաղաքական հիմնախնդիրների հիմքում ընկած է հիմնականում բնակչության պետական (վրացերեն) լեզվի չիմացությունը, որն առաջ է բերում Վրաստանում բարձրագույն կրթություն ստանալու, գիտական առաջընթացի, աշխատանքի, դպրոցական համակարգի կառավարման, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման հետ կապված մի շարք խնդիրներ: Հատկապես ընդգծվել է դպրոցի կառավարման սուբյեկտների կողմից պետական լեզվի չիմացության հարցը, որից առաջանում են դպրոցների փաստաթղթային գործունեության իրականացման, տնօրենների և ուսուցիչների հավաստագրման, կրթության օրենսդրական փոփոխությունների, որոշումների մասին տեղեկեկությունների ձեռք բերման, կրթական ոլորտում նրանց ինտեգրման հետ կապված դժվարություններ: Ուսուցիչների, աշակերտների հետ

մեր հարցումներից պարզ է դարձել, որ ի տարբերություն ուսուցիչների, սովորողների վրացերեն լեզվի իմացության մակարդակը համեմատաբար ավելի բարձր է հատկապես միջին դասարաններում: Դպրոցի նյութատեխնիկական ապահովածության մասին տնօրենների հարցումների հիման վրա ներկայացվել են, թե ինչ պայմաններում է իրականացվում կրթությունը ջավախահայ դպրոցներում:

Երկրորդ ենթագլխում՝ «Հանրակրթական դպրոցի կառավարումը Ջավախքում», ներկայացվել է հանրակրթության կառուցվածքը, դպրոցի կառավարման համակարգը, կառավարման սուբյեկտների (տնօրեն, փոխտնօրեններ, հոգաբարձական խորհուրդ, մեթոդական ամբիոններ և այլն) գործառույթները «Ընդհանուր կրթության մասին» Վրաստանի օրենքի շրջանակներում:

Առանձին-առանձին ուսումնասիրվել, վերլուծության է ենթարկվել կառավարման սուբյեկտների գործունեությունը, բացահայտվել և հիմնավորվել են նրանց գործունեության թերի ու բաց կողմերը, որոնցից բխում են առկա խնդիրները: Նշվել են կառավարման սուբյեկտների լրացուցիչ գործառույթները, կախված տարածաշրջանի դպրոցների առանձնահատկություններից: Անդրադառնալով դպրոցների տնօրենների գործունեությանը՝ հիմնավորվել է, որ տարածաշրջանի հայկական դպրոցներում տնօրենը պետք է ավելի շատ ուշադրություն դարձնի կառավարման սուբյեկտների սերտ համագործակցությանը, կոլեկտիվում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ստեղծմանը, ինչպես նաև մի շարք պահանջների հստակ իրականացմանը, այդ թվում՝ **ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիաների զարգացմանն ու կայացմանը, նրանց՝ պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը, դպրոցի աշխատանքային, անվտանգության և սանիտարահիգիենիկ պայմանների ապահովմանը, մայրենի լեզվի, հայոց լեզվի, հայ գրականության և հայոց պատմության դասավանդման կազմակերպմանը՝ նպաստելով սովորողների ազգային դաստիարակությանը:**

Մեր հարցումը ուսուցիչներին «Ի՞նչ վերաբերմունք են ցուցաբերում տեղական կառավարման մարմինները ուսուցման կազմակերպման նկատմամբ» հարցի շուրջ, ստացել է հետևյալ արդյունքը. հարցված ուսուցիչների 10 %-ը պատասխանել է՝ ուշադիր են, 15 %-ը նշել էրբեմն հետաքրքրված են, իսկ 75 %-ի կարծիքով՝ անտարբեր են: Իսկ թե «Ինչպե՞ս են ծնողները վերաբերվում դպրոցում իրականացվող կրթաադաստիարակչական գործընթացին» հարցված ուսուցիչներից 6.25 %-ը պատասխանել է՝ շատ են հետաքրքրված, 15 %-ը՝ քիչ են հետաքրքրված, իսկ 78.75 %-ի կարծիքով՝ անտարբեր են: Ուստի, հաշվի առնելով տարածաշրջանի դպրոցների կառավարման և ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման նկատմամբ տեղական կառավարման մարմինների և ծնողների անտարբերության այս ցուցանիշը, հիմնավորվել է նրանց ներգրավածության անհրաժեշտությունը, և կարևորվել դպրոցի, ընտանիքի, համայնքի սերտ համագործակցությունը:

Յրրորդ ենթագլխում՝ «Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման խնդիրները Ջավախքի հայկական դպրոցներում», մանրամասնորեն քննության է առնվել Վրաստանի «Ազգային ուսումնական պլանը» հանրակրթական դպրոցների համար, ուսումնասիրվել և վերլուծվել է ուսումնադաս-

տիարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացը և վեր են հանվել մի շարք խնդիրներ, որոնք կապված են **ուսուցման ժամանակակից մեթոդների և SZS-ի կիրառման, դասագրքերի, գնահատման, խոսքի մշակույթի զարգացման, ազգային դաստիարակության իրականացման, ուսուցման և դաստիարակության գործընթացում ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների հետ**: Հատկապես կարևորվել են ազգային լեզվի, պատմության ուսումնասիրությանն ու ազգային դաստիարակության իրականացմանն առնչվող այն խնդիրները, որոնք հնարավոր է լուծել ներդպրոցական համակարգում աշխատանքների նպատակային կազմակերպման դեպքում: Մասնավորապես՝ անդրադարձել ենք.

ա) ուսուցման գործընթացում ուսուցիչների կողմից մանկավարժական նորարարական մեթոդների, SZS-ի կիրառմանը, և անկետային հարցումներից էլնելով համոզվել, որ վերջիններս ուսուցիչների կողմից լայնորեն չեն կիրառվում,

բ) վրացերենից-հայերեն թարգմանված դասագրքերի խնդիրներին՝ փաստելով, որ շատ են լեզվական, տպագրական սխալները, որոնք առաջ են բերում բովանդակության ընկալման խնդիրներ, երկլեզու դասագրքերի (1-6-րդ դասարանների համար նախատեսված) խնդիրներին՝ հիմնավորելով, որ դրանք չեն ապահովում ուսուցման բարձր որակ, քանի որ ուսուցիչները, չտիրապետելով վրացերեն լեզվին, դասագրքերում վրացերենով գրվածը շրջանցում են, արդյունքում՝ գիտելիքների որոշ մաս չի մատուցվում սովորողներին, ուսումնասօժանողակ գրականության խնդիրներին՝ դպրոցներում գրեթե չկան ուսումնասօժանողակ ձեռնարկներ, եղածներն էլ՝ վրացերենով են և ուսուցիչներին անհասկանալի,

գ) ուսուցման գործընթացում սովորողների գիտելիքների որակի վերահսկողությանը՝ կարևորելով զարգացնող (ուսուցանող) գնահատումը, գնահատման չափանիշների պահպանումը, սովորողների ինքնագնահատման կարողությունների ձևավորումը, ընթացիկ և կիսամյակային քննությունների, ստուգաքննների անցկացումը,

դ) սովորողների ֆիզիկական, բարոյական, գեղագիտական, էկոլոգիական, քաղաքացիական, ազգային դաստիարակության իրականացմանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ **ազգային դաստիարակությունը** պետք է դնել հայ երեխայի ընդհանուր դաստիարակության բովանդակության հիմքում, հիմնավորվել է այն, որ եթե վրացերենից-հայերեն թարգմանված դասագրքերը չեն ծառայում ջավախահայության ազգային դաստիարակության իրականացմանը, ապա այդ բացը պետք է լրացնեն ուսուցիչները՝ դասի ընթացքում վրացական արվեստի, մշակույթի, պատմության կողքին ներկայացնելով նաև հայկականը և կազմակերպելով դպրոցական և արտադպրոցական տարբեր միջոցառումներ,

ե) դպրոցներում ազգային պատմության, մշակույթի, արվեստի ուսումնասիրությանը՝ կարևորելով կրթության բովանդակության մեջ «Հայոց պատմություն» առարկայի ներմուծումը, հայ մշակույթին, արվեստին առնչվող հարցերի դիտարկումը հումանիտար առարկայախմբերում՝ ինտեգրացված ձևով,


զ) խոսքի մշակույթի զարգացմանը՝ հիմք ընդունելով, որ Ջավախքում խոսքի զարգացման հիմնական օղակը դպրոցն է, քանի որ խոսակցական լեզուն մի

բարբառ է, որի հիմքը ոչ թե արևելահայերենն է, այլ՝ արևմտահայերենը, իսկ ուսուցումը դպրոցներում իրականացվում է արևելահայերենով, է) ուսումնադաստիարակչական գործընթացում ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններին, աշակերտակենտրոն ուսուցման իրականացմանը:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ չնայած կրթական համակարգում կատարվող դրական բարեփոխումներին, դպրոցներում կրթադաստիարակչական խնդիրները չեն նվազել, դա պայմանավորված է հիմնականում դպրոցի գործունեության մեջ նորամուծությունների ակտիվ ներդրումից և կառավարման սուբյեկտների կողմից դրանց նպատակային և արդյունավետ իրականացումից:


Չորրորդ ենթազխում՝ «Բազմալեզու կրթության իրականացումը ջավախահայ դպրոցներում», դիտարկվել են Ջավախքի հայկական դպրոցներում բազմալեզու, մասնավորապես՝ երկլեզու ուսուցման իրականացման նպատակը, ուսումնական ծրագրերը, դասագրքերը և դրանց դրական ու բացասական ազդեցությունները սովորողների ուսուցման որակի վրա, պարզաբանվել է ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ Ջավախքի հայկական դպրոցներում ներդրված երկլեզու ուսուցման էությունը, որը հիմնականում ենթադրում է հայերենի կողքին վրացերեն լեզվով ուսուցումը, քանի որ դպրոցներում միայն «Վրաց լեզու» առարկայի դասավանդումը չի նպաստում սերունդների կողմից պետական լեզվի կիրառական իմացությանը: Այս տեսանկյունից անհրաժեշտ է համարվել երկլեզու ուսուցման ներդրումը Ջավախքի դպրոցներում, սակայն հիմնավորվել է, որ այն, նպատակառոտորեն լինելով միայն աշակերտների վրացերեն լեզվի իմացությանը, խանգարում է սովորողների կայուն և հիմնավոր գիտելիքների ձեռք բերմանը: Երկլեզու ուսուցման վերաբերյալ ուսումնասիրությունները, ուսուցիչների կարծիքները և սեփական փորձը հիմք են տվել ասելու, որ երկլեզու ուսուցումը Ջավախքի դպրոցներում չի ապահովում կրթության բարձր որակ՝ կախված երկլեզու ուսուցման կազմակերպման ձևերից, մեթոդներից և ուսուցիչների պատրաստվածության մակարդակից:

Հինգերորդ ենթազխում՝ «Ջավախքի հայկական դպրոցներում արդի կրթադաստիարակչական հիմնախնդիրների լուծման ուղիները», հիմք ընդունելով հետազոտության ընթացքում մեր կողմից առանձնացրած Ջավախքի հայկական դպրոցներում առկա կառավարման և ուսումնադաստիարակչական հիմնախնդիրները և դրանց առաջացման պատճառները, որոնք մանրամասն ուսումնասիրվել են հետազոտության ընթացքում, առաջադրվել են այդ հիմնախնդիրների լուծման համար մոտեցումներ և ուղիներ: Չնայած նշված ուղիները նորարարություն չեն մանկավարժության մեջ, բայց դրանք անհրաժեշտ են առկա հիմնախնդիրների լուծման համար: Ներկայացված է Ջավախքի հայկական դպրոցների կառավարման խնդիրների լուծման ուղիների մոդելը (գծապատկեր 1), որում նշված ուղիները միտված են ջավախահայ դպրոցի զարգացմանն ու կառավարման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Մշակվել են նաև այս ուղիների իրականացման համար անհրաժեշտ քայլեր, որոնք ենթադրում են կառավարման գործընթացում կառավարման սուբյեկտների կողմից մի շարք գործառնությունների նպատակային իրականացում:



Գծապատկեր 1: Ջավախքի հայկական դպրոցների կառավարման խնդիրների լուծման ուղիների մոդելը

Առաջադրվել են նաև Ջավախքի հայկական դպրոցներում ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման ուղիները և ներկայացվել իրականացման անհրաժեշտ մոդելը (գծապատկեր 2):



Գծապատկեր 2: Ջավախահայ դպրոցներում ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման ուղիների մոդելը

Այսպիսով, Ջավախքի հայկական դպրոցներում արդի կրթադաստիարակչական հիմնախնդիրների լուծման առաջադրված մոտեցումները և ուղիները կնպաստեն դպրոցի կառավարման և ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման արդյունավետության բարձրացմանը, հատկապես տարածաշրջանում ազգային լեզվի պատմության, մշակույթի պահպանմանը, սովորողների ազգային և քաղաքացիական դաստիարակության իրականացմանը, ազգային կողմորոշումների ձևավորմանն ու զարգացմանը, ինչպես նաև միջմշակութային երկխոսությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ջավախքի պատմության, դպրոցների ձևավորման և զարգացման պատմության, Վրաստանի կրթական համակարգի նորմատիվաիրավական փաստաթղթերի վերլուծման, ջավախահայ դպրոցի արդի վիճակի ուսումնասիրության հիման վրա Ջավախքի հայկական դպրոցներում արդի հիմնախնդիրների բացահայտումը, տեսական վերլուծությունը, մեր կողմից իրականացված դիտումների արդյունքները և առկա հիմնախնդիրների լուծման ուղիների առաջադրումը թույլ են տալիս անելու հետևյալ եզրակացությունները.

1. Հետազոտության հիմնախնդիրների վերաբերյալ հոգեբանամանկավարժական, պատմական և մեթոդական գրականության, մամուլի, օրենսդրության վերլուծությունների հիման վրա բացահայտվել են Ջավախքի հայկական դպրոցներում արդի կրթադաստիարակչական հիմնախնդիրները և դրանց առաջացման պատմամանկավարժական հիմքերը,
2. Ջավախքի հայկական դպրոցների կառավարման սուբյեկտների գործունեության հետազոտությունն ու վերլուծությունը ցույց է տալիս, որ դպրոցների կառավարման գործընթացում անհրաժեշտ է հոգաբարձական խորհրդի և կառավարման մյուս սուբյեկտների գործառնությունների հստակեցում, կառավարման ժողովրդավարական ոճի կիրառում, ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիաների զարգացում և փորձի փոխանակում, կրթության բովանդակության վերանայում:
3. Ջավախահայ դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների հետազոտության արդյունքում բացահայտվել է այն փաստը, որ ուսուցման գործընթացում շարունակաբար չեն կիրառվում ուսուցման ժամանակակից մեթոդները, տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաները, գերակշռում է ուսուցման ավանդական ձևը, աշակերտների խոսքի կուլտուրան բավարար մակարդակի վրա չէ, սովորողների գիտելիքները հաճախ չեն համապատասխանում ստացած գնահատականին, վրացենից հայերեն թարգմանված դասագրքերը լիովին չեն համապատասխանում ներկայացվող ժամանակակից պահանջներին:
4. Ուսումնասիրելով Ջավախքի հայկական դպրոցներում երկլեզու ուսուցման ներդրման նպատակները, ուսումնական ծրագրերը՝ բացահայտվել են երկլեզու ուսուցման արդի խնդիրները, որոնք պայմանավորված են

հիմնականում երկլեզու ուսուցման կազմակերպման մեթոդների ու ձևերի, ուսուցիչների երկլեզու գիտելիքների բացակայությամբ: Այս առումով աշխատանքում առաջադրվել են երկլեզու ուսուցման արդյունավետության բարձրացման հետևյալ մոտեցումները.

ա) բարձրացնել մայրենի լեզվի ուսուցման մակարդակը՝ հիմք ընդունելով, որ բազմալեզու ուսուցման հիմքը մայրենի լեզուն է, և դրա լավ իմացությունը կնպաստի մյուս լեզուների հաջող յուրացմանը,

բ) վրացերեն լեզվի ուսուցիչների օգնությամբ դպրոցներում պարբերաբար կազմակերպել դասընթացներ, անհատական կամ խմբային պարապմունքներ ուղղված ուսուցիչների երկլեզու գիտելիքների ձեռք բերմանը,

գ) ստեղծել կրթական հիմնախնդրների ուսումնասիրման կենտրոններ՝ ներգրավելով նաև տարածաշրջանի դպրոցների հայ և վրացի կոմպետենտ ուսուցիչների, ովքեր կիրականացնեն համատեղ մանկավարժական հետազոտություններ, կվերապատրաստեն ուսուցիչներին, կմշակեն տարածաշրջանի դպրոցների առանձնահատկություններին համապատասխան երկլեզու ուսուցման մոդելներ և մեթոդներ, կվերանայեն և կկատարելագործեն դասագրքերը:

5. Ձավախքի հայկական դպրոցներում կառավարման և ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ իրականացման համար առաջադրվել են կրթադաստիարակչական հիմնախնդիրների լուծմանը միտված մոտեցումներ՝ կրթության բովանդակության արդիականացման, ուսուցիչների կոմպետենտության զարգացման, կոլեկտիվում համագործակցային մթնոլորտի ստեղծման, դպրոց-ընտանիք-համայնք կապի ամրապնդման, ուսուցման նորարարությունների ակտիվ ներդրման, երկլեզու ուսուցման արդյունավետ իրականացման, խոսքի մշակույթի զարգացման, կրթության բովանդակության մեջ «Հայոց պատմություն» առարկայի ներմուծման, դասագրքերի բարելավման, ազգային դաստիարակության իրականացման վերաբերյալ:

6. Ձավախքում վրացերենի, մայրենի լեզվի, պատմության մշակույթի իմացությամբ և ազգային ու համամարդկային արժեքները կրող սերնդի ձևավորման համար հարկ է համարվել անցկացնել դպրոցական և արտադպրոցական միջաբք միջոցառումներ, մասնավորապես՝ պետական, մայրենի լեզվին, ազգային պատմությանն ու մշակույթին առնչվող լրացուցիչ և ինտեգրացված դասընթացներ, երկու երկրների պատմությունը, մշակույթն ու ավանդույթներն արտացոլող մրցույթներ, գրական ցերեկույթներ՝ կարևորելով հայ-վրացական միջմշակույթային կապերը, խրախուսել սովորողների մասնակցությունը Վրաստանում և Հայաստանում անցկացվող տարբեր միջոցառումներին, օլիմպիադաներին, ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համագործակցել՝ առանձին դպրոցների աշակերտների հանդիպումների կազմակերպման, ուսուցիչների վերապատրաստման դասընթացների մասնակցության, մասնագիտական գրականության և փորձի փոխանակման նպատակով: Այս մոտեցումները

կնպաստեն սովորողների ազգային և քաղաքացիական դաստիարակությանը, արժեքային կողմնորոշումների ձևավորմանն ու զարգացմանը, միջմշակութային երկխոսությանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ.

1. Սիրականյան Ն., Հայեցի կրթությունը Ջավախքում, «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, 2008 թ., № 5-6, էջ 108-115:
2. Սիրականյան Ն., Կրթական և մշակութային կյանքի զարգացումը Ջավախքում, «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, 2009 թ., № 5-6, էջ 103-110:
3. Սիրականյան Ն., Ջավախքի հայկական դպրոցները քաղաքական գործոնների ազդեցության տակ, «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, 2010 թ., №1, էջ 54-62:
4. Սիրականյան Ն., Ջավախքի հայկական դպրոցների արդի հիմնախնդիրներից, «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, 2010 թ., № 6, էջ 52-59:
5. Սիրականյան Ն., Խոսքի կուլտուրան Ջավախքի հայկական դպրոցներում, «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, 2011 թ., № 2, էջ 47-51:
6. Սիրականյան Ն., Ֆիզիկական և բարոյական դաստիարակության դրվածքը Ջավախքի հայկական դպրոցներում, «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, 2011 թ., № 8, էջ 52-57:
7. Սիրականյան Ն., Ուսուցման նորարարական մեթոդների կիրառումը և դրանց նշանակությունը Ջավախքի հայկական դպրոցներում, «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, 2012 թ., № 7, էջ 38-43:
8. Սիրականյան Ն., Վրաստանի հանրակրթական համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, 2014 թ., №1, էջ 48-59:
9. Սիրականյան Ն., Երկլեզու և բազմալեզու ուսուցման կազմակերպումը Ջավախքի հայկական դպրոցներում, «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, 2015 թ., № 6, էջ 54-59:
10. Սիրականյան Ն., Ուզունյան Բ., Հայ մշակութային արժեքների ճանաչման, պահպանման և զարգացման գործընթացը Ջավախքի հայկական դպրոցներում, «Հայկական լեռնաշխարհ», Հանրապետական գիտաժողովի նյութեր, 2015 մարտի 24-25, Երևան 2015, էջ 441-450:

СИРАКАНЯН НАРИНЕ ГАМЛЕТОВНА
СОВРЕМЕННЫЕ УЧЕБНО-ВОСПИТАТЕЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ
В АРМЯНСКИХ ШКОЛАХ ДЖАВАХКА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01- "Теория и история педагогики".

Защита диссертации состоится 14-го апреля 2016 г. в 12⁰⁰ на заседании специализированного совета „Педагогика” 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу 0010, Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Армянские школы Джавахка, находясь на территории Грузии, были тесно связаны с армянской образовательной действительностью, руководствовались традициями управления армянской образовательной системы, и сохранили свою национальную идентичность. Однако сегодня дальнейшее существование армянской школы в Джавахке находится в опасности.

Много говорилось о политических, экономических, социальных и образовательных проблемах Джавахка, были предложены пути их решения, однако, к сожалению, они не были систематизированы, а проблемы общего образования по сей день не подвергались всестороннему анализу с педагогической точки зрения.

В армянских школах региона всегда возникали проблемы, связанные с образованием, которые оставили свой след в национальном воспитании поколений, в приобретении основательных и устойчивых знаний. И сегодня есть серьезные проблемы в области управления школой, организации учебно-воспитательных работ и др. Представление этих проблем армянским и грузинским сообществам может в корне изменить существующую ситуацию и армянские школы региона поставить на службу возрождения национального духа, сохранения армянской истории, языка, культуры традиций, укрепления национального воспитания. Этим и обусловлена актуальность данного исследования.

Цель исследования- выявить современные учебно-воспитательные проблемы в армянских школах Джавахка и их воздействие на качество образования детей, предложить новые подходы и пути их решения.

Задачи исследования. Были предложены следующие задачи, обусловленные целью, объектом и гипотезой исследования:

1. На основе анализа психолого-педагогической, исторической и методической литературы, законодательства и прессы выявить учебно-воспитательные проблемы в армянских школах Джавахка и историко-педагогические основы их возникновения.
2. Исследовать сущность управления и учебно-воспитательной деятельности в армянских школах Джавахка, выявить существующие проблемы, акцентируя необходимость национального воспитания.

3. Обосновать необходимость создания исследовательских центров для разработки моделей и методов билингвального образования, усовершенствования учебников и углубления знаний грузинского языка учителей.
4. Разработать эффективные предложения, направленные на решение учебно-воспитательных задач, способствующих национальному и гражданскому воспитанию учащихся, формированию и развитию ценностных ориентаций.

Научная новизна исследования.

- На основе анализа нормативно-правовых документов управления, исторической и педагогической литературы выявлены современные учебно-воспитательные проблемы и причины их возникновения в армянских школах Джавахка.
- Предложены пути решения существующих проблем в армянских школах Джавахка с учетом региональных, языковых и межкультурных вопросов.
- Для национального и гражданского воспитания учащихся, для формирования и развития их ценностных ориентаций были представлены следующие предложения: включение предмета «Армянской истории» в школьных программах, организация мероприятий, посвященной истории и культуры двух народов, обеспечение сотрудничества между школами Грузии и Армении, укрепление межкультурных связей и другие.

Теоретическое значение исследования обусловлено необходимостью научного анализа всеобщей образовательной ситуации в армянских школах Джавахка. Выявляя современные учебно-воспитательные проблемы армянских школ региона, диссертация может стать путеводителем для многих работников сферы образования и политики. В условиях отсутствия образовательной концепции армянских школ Джавахка и разного рода информации о ней данная работа приобретает особую важность. Исследование дополняет курс истории армянской педагогики.

Практическое значение исследования. Выявление причин возникновения проблем армянских школ Джавахка, их уточнение, предложенные подходы могут оказать практическую помощь директорам и учителям школ региона. Оно также будет служить основанием для улучшения учебников, для проведения конференций, для организации курсов переподготовки учителей и различных семинаров. Результаты исследования могут служить основой для создания специальных педагогических курсов, а также для разработки тем курсовых и дипломных работ

Результаты исследования обсуждались на заседаниях кафедры теории общей педагогики и истории АГПУ имени Х. Абовяна, опубликованных в научно-педагогических статьях, на семинарах НИО (2014 г.), на конференции по теме «Армянское нагорье», организованной АГПУ (2015 г.), на общеармянской научно-практической педагогической конференции по теме «Современные проблемы организации армянского образования в диаспоре», организованной МОН РА и НИО.

Структура диссертации. Диссертация состоит из введения, двух глав, заключения, библиографии и приложений.

По теме диссертации опубликовано 10 статей.

SIRAKANYAN NARINE HAMLET
CURRENT UPBRINGING AND EDUCATIONAL PROBLEMS
IN JAVAKHK ARMENIAN SCHOOLS

Thesis for candidate of Pedagogical Science degree, speciality 13.00.01-“Theory and History of Pedagogy”.

The defense of the thesis will take place on 14 April, 2016 at 12⁰⁰ at the meeting of the specialized pedagogical committee 020 HAC for granting scientific degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Address: Yerevan 0010, Tigran Mets str. 17.

SUMMARY

Research Actuality. The culture of Javakhk is the part of Armenian culture. Here Armenians have created rich culture for centuries, which was based on the national school. The Armenian schools, being in the territory of Georgia, have had a strong link with the Armenian educational reality; they have been led by the Armenian traditional educational management, educational up-bringing methods and have preserved national identity. Today the Armenian schools in Javakhk face the danger of disappearance.

It has been spoken about Javakhk political, economic, social and educational problems for many times, some recommendations have been made to solve the problems but, unfortunately, they are not systemized, and the problem related to the public education has not been comprehensively examined yet.

Armenian schools of the region have faced many educational problems depending on the international relations that have influenced formulation of self-consciousness, as well as getting profound and stable knowledge. Today there are many problems in terms of organization of educational and upbringing activities and in other spheres. The educational and upbringing issues depending on how they are presented to Armenian and Georgian public can change greatly the situation to make the Armenian schools of the region to reborn the national spirit, to preserve the Armenian language, history, culture, to strengthen the national upbringing means. The actuality of this work is conditioned by the urgency of these issues.

The aim of the research is to reveal the educational and upbringing issues and their impact on Javakhk children’s education quality and to propose new ways and approaches to solve them.

The objectives of the research are:

1. To reveal the main educational problems of Javakhk Armenian schools and the historical-pedagogical bases of their origin by analyzing scientific and historical literature, media and legislation,
2. to research the essence, structure and peculiarities of instructional and upbringing methods in the region in the context of national educational concepts,

3. to justify the necessity of creating centers to introduce the model of bilingual education aimed at improving textbooks and deepening the teachers' Georgian Language knowledge,
4. to work out effective recommendations for solving the educational and upbringing problems, which will contribute to the students' national and civic educational means and forming their values and personal development,

The scientific innovation of the research are as follows:

- In the Armenian reality from the pedagogical perspective on the basis of Javakhk Armenian schools' management normative-judicial and historical facts, as well as analysis of pedagogical literature, current educational and upbringing problems and the reasons have been revealed.
- New ways have been nominated to solve the problem of ensuring education quality taking into account regional, language and intercultural issues.
- The following offers are presented for students' national and civic upbringing, for formulation and development of values: including "Armenian History" subject into the school program, organization of events dedicated to the history and culture of both countries, provision of partnership between the schools of Armenia and Georgia, strengthening intercultural communication etc.

The theoretical significance of the research is conditioned by the necessity of scientific analysis based on the general situation in Javakhk schools. This thesis, that covers the educational issues of one of the important Armenian regions, can be a guide for many researchers in the political and educational spheres. More importance is given to this work when there is lack of education concept and various information in the Armenian reality. It can also be the basis of developing special pedagogical courses, as well as for course and graduation work. The research also makes some additions to the course of Armenian pedagogic history.

The practical significance of the research.

Revealing Javakhk schools' problems and reasons, their clarification, the approaches for national upbringing issues can fairly orientate and give practical assistance to the regional schools' directors and teachers. It will be basis for developing educational concepts, improving textbooks, conducting conferences, organizing teacher training courses and seminars.

The outcomes of the research have been discussed at ASPU Theory and History of General pedagogy Chair sessions and also in published scientific-pedagogical journals, NIE seminar (2014), Conference titled "Armenian Highland" (2015), Conference called "Current Problems of organizing Armenian Education in Diaspora" (2015), as well as in experimental schools.

The structure of the thesis.

The thesis consists of preface, two chapters, conclusion, list of literature, and handouts. 10 articles have been published on this topic.

